

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նիստի

քաղ. Երևան

23 մարտի 2007 թվականի

Նախագահում էր՝

Ա. Մարգարյան - ՀՀ վարչապետ (խորհրդի նախագահ)

Մասնակցում էին՝

- Վ. Ներսիսյանց - ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական (խորհրդի նախագահի տեղակալ)
- Ա. Հակոբյան - ՀՀ վարչապետի խորհրդական
- Տ. Դավթյան - ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ
- Ա. Ավետիսյան - ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
- Վ. Առաքելյան - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
- Վ. Մովսիսյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
- Ա. Գրիգորյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերի քարտուղարության պետ (խորհրդի քարտուղար)
- Գ. Չուգասյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական կազմակերպության նախագահ
- Բ. Ենգիբարյան - «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն
- Վ. Հակոբյան - «Ալգորիթմ-Մերվիս» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
- Հ. Զմբյան - «Լայքս» ՓԲԸ-ի ծրագրային միջոցների մշակման և տեխնիկական ծառայությունների տնօրեն
- Գ. Էվոյան - «Հայլինք» ՍՊԸ-ի տնօրեն
- Մ. Փափազյան - «Կրթություն հանուն զարգացման» կրթական և բարեսիրական հիմնադրամի նախագահ
- Վ. Ալեքսանդրյան - Կառավարման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների համալսարանի ռեկտոր

Հրավիրվածներ՝

- Մ. Հարությունյան - ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
- Գ. Նիկողոսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի արտադրական ենթակառուցվածք-

- ների վարչության պետ
- Գ. Առաքելյան - ՀՀ կառավարության աշխատակազմի արտադրական ենթակառուցվածք-
ների վարչության գլխավոր մասնագետ
- Պ. Դեմիրճյան - ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայ-
նության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ
- Հ. Խանջյան - «Բի Լայն» ՍՊԸ-ի նախագահ
- Դ. Սանդուխյան - «Ինտերնյուս» հասարակական կազմակերպության ծրագրի համակարգող
- Ա. Բաղդրյան - «Յունիքոմփ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
- Հ. Մուսայելյան - «Սինոփսիս Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն
- Ա. Ալեքսանյան - «Արմինկո» ՍՊԸ համատեղ ձեռնարկության գլխավոր տնօրեն
- Կ. Վարդանյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն»
հասարակական կազմակերպության տնօրեն
- Ժ. Ազիզյան - ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության
աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման
բաժնի պետ
- Գ. Բարսեղյան - «Մայքրոսոֆթ» ընկերության հայաստանյան ներկայացուցչության տնօրեն
- Ո. Մարուխյան - Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի ռեկտոր
- Ս. Աղբալյան - Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի պրոռեկտոր
- Ռ. Աղգաշյան - Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի պրոռեկտոր
- Է. Մանուկյան - «ԻՍՄԱ» ՍՊԸ-ի տնօրեն
- Լ. Մինասյան - Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի
հայկական մասնաճյուղի գործադիր տնօրեն
- Ս. Մանուկյան - «ԻՍՄԱ» ՍՊԸ-ի տնօրենի տեղակալ
- Գ. Սաղյան - «Արմինկո» ՍՊԸ համատեղ ձեռնարկության գլխավոր փոխտնօրեն
- Ռ. Հակոբյան - «Բի Լայն» ՍՊԸ-ի «Microsoft Windows» գործավար համակարգի
տեղայնացման աշխատանքների խմբի ղեկավար
- Ա. Բանույան - «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային
կազմակերպության արտաքին կապերի գծով փոխտնօրեն
- Ա. Ղազարյան - «CAPS» ծրագրի փոխտնօրեն
- Ա. Մխիթարյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցում» ՓԲԸ-ի գործադիր
տնօրեն
- Ա. Սարգսյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական
տեխնոլոգիաների զարգացման հարցերի քարտուղարության

առաջատար մասնագետ

Ա. Մկրտչյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ

Դ. Հայրապետյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

(Ա. Գրիգորյան, Ա. Հակոբյան)

2. Խորհրդի կազմի ռոտացիայի մասին

(Ա. Գրիգորյան)

3. ՀՊՃՀ-ի մեքենայական թարգմանության լաբորատորիայի կողմից հայերեն-անգլերեն թարգմանչական համակարգի իրականացման արդյունքների մասին հաշվետվության ներկայացում

(Է. Մանուկյան)

4. «Microsoft Windows» գործավար համակարգի տեղայնացման աշխատանքների կատարման մասին տեղեկատվության ներկայացում

(Հ. Խանջյան)

5. Այլ հարցեր

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստի

հանձնարարականների կատարման ընթացքի մասին

(Ա. Գրիգորյան, Վ. Ներսիսյանց, Տ. Դավթյան, Վ. Առաքելյան, Ա. Բաղդրյան,
Ժ. Ազիզյան, Ա. Հակոբյան, Ա. Մարգարյան)

1. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ Վ. Առաքելյանին՝ կազմակերպել մինչև 100 մՎտ հզորությամբ 5,15-ից մինչև 5,35 ԳՀց և 5,470-ից մինչև 5,825 ԳՀց հաճախականության տիրույթների ազատականացման մասին հարցի քննարկումը և ներկայացնել համապատասխան առաջարկություն:

2. ՀՀ վարչապետի խորհրդական Ա. Հակոբյանին և Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանին՝ ապահովել խորհրդի համապատասխան աշխատանքային խմբերի ակտիվ մասնակցությունը ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունում կազմակերպվող մինչև 100 մՎտ հզորությամբ 5,15-ից մինչև 5,35 ԳՀց և 5,470-ից մինչև 5,825 ԳՀց հաճախականության տիրույթների ազատականացման հարցի մասին քննարկմանը:

3. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանն աջակցող մասնակիցներին իրենց կատարած աշխատանքների համար շնորհակալություն հայտնել խորհրդի հետագա նիստերից մեկին հաջորդող ընդունելության ընթացքում:

2. Խորհրդի կազմի ռոտացիայի մասին

(Ա. Գրիգորյան, Ա. Մարգարյան)

Ընդունել ի գիտություն Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի կազմում ընդգրկված «Միգմա» ՍՊԸ-ի տնօրենի, «Ավիաինֆոտել» ՓԲԸ-ի գործադիր տնօրենի, «Բի Լայն» ՍՊԸ-ի նախագահի, «Էլեկտրոնային Հայաստան» հիմնադրամի տնօրենի, «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի տնօրենի և Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի պրոռեկտորի փոխարեն տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի կազմակերպությունների ներկայացուցիչների ցուցակից «Ալգորիթմ-Սերվիս» ՓԲԸ-ի գործադիր տնօրենին, «Լայքս» ՓԲԸ-ի գործադիր տնօրենին, «Հայլինք» ՍՊԸ-ի տնօրենին, «Կրթություն հանուն զարգացման» կրթական և բարեսիրական հիմնադրամի նախագահին, «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին ու Կառավարման և ինֆորմացիոն տեխնո-

լոգիաների համալսարանի ռեկտորին ընդգրկելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2007 թվականի փետրվարի 21-ի «Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի անդամների` ռոտացիոն կարգով փոփոխվելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2003 թվականի ապրիլի 4-ի N 141-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 139-Ա որոշումը:

3. ՀՊՃՀ-ի մեքենայական թարգմանության լաբորատորիայի կողմից հայերեն-անգլերեն թարգմանչական համակարգի իրականացման արդյունքների մասին հաշվետվության ներկայացում

(Ա. Գրիգորյան, Է. Մանուկյան, Ա. Մարգարյան)

1. Ընդունել ի գիտություն ՀՊՃՀ-ի մեքենայական թարգմանության լաբորատորիայի կողմից հայերեն-անգլերեն թարգմանչական համակարգի իրականացման արդյունքների մասին հաշվետվությունը:

2. Առաջարկել «ԻՍՄԱ» ՍՊԸ-ի տնօրեն Է. Մանուկյանին թարգմանչական համակարգի իրականացման համար ֆինանսական նոր աջակցություն ստանալու նպատակով ՀՀ վարչապետին ներկայացնել համապատասխան առաջարկություն:

4. «Microsoft Windows» գործավար համակարգի տեղայնացման աշխատանքների կատարման մասին տեղեկատվության ներկայացում

(Ա. Գրիգորյան, Հ. Խանջյան, Դ. Սանդուխյան, Լ. Մինասյան, Կ. Վարդանյան, Գ. Չուգասզյան, Գ. Բարսեղյան, Տ. Դավթյան, Ա. Հակոբյան, Ա. Մարգարյան)

1. Ընդունել ի գիտություն Microsoft Windows գործավար համակարգի տեղայնացման աշխատանքների կատարման մասին տեղեկատվությունը:

2. Առաջարկել «Բի Լայն» ՍՊԸ-ի նախագահ Հ. Խանջյանին հանրությանը «Windows XP» տեղայնացված (թարգմանված) ծրագրի մասին տեղեկատվությամբ ապահովելու համար ձեռնարկել համապատասխան միջոցներ:

5. Այլ հարցեր

(Վ. Ներսիսյանց, Ա. Գրիգորյան, Գ. Չուգասզյան, Ա. Բանույան, Հ. Խանջյան,
Ա. Բալդրյան, Գ. Սադյան, Ռ. Հակոբյան, Գ. Բարսեղյան, Ա. Մարգարյան)

1. ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, խորհրդի նախագահի տեղակալ Վ. Ներսիսյանցը ներկայացրեց համակարգչի հայերեն ստեղծարարի բացակայության խնդիրը, որը կարևոր օղակ է հանրության համար՝ հայոց լեզուն համակարգչով աշխատելու և էլեկտրոնային կապ հաստատելու ժամանակ օգտագործելու նպատակով և գործարարներին հորդորեց միջոցներ ձեռնարկել տվյալ խնդրի լուծման համար:

2. «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական կազմակերպության նախագահ Գ. Չուգասզյանը ներկայացրեց էլեկտրոնային բովանդակության երկրորդ համահայկական մրցույթի մասին կատալոգն ու էլեկտրոնային սկավառակը և առաջարկեց էլեկտրոնային բովանդակության համահայկական մրցույթի անցկացման շարունակականությունն ապահովելու համար ձեռնարկել համապատասխան միջոցներ:

3. «Մայքրոսոֆթ» ընկերության հայաստանյան ներկայացուցչության տնօրեն Գ. Բարսեղյանը հայտարարեց, որ «Մայքրոսոֆթ» ընկերության հայաստանյան ներկայացուցչությունը 2007 թվականի ապրիլի 10-ին կազմակերպելու է «Ինովացիոն օր» և խորհրդի նիստի մասնակիցներին հրավիրեց մասնակցել նշված միջոցառմանը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Մ Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա.

ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Մ Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա.

ԳՐԻԳՈՐՅԱՆ